ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3301, ք. Կապան, Չարենցի 1
հեռ. /+37460/720072
էլ.փոստ kapanmayor@gmail.com, info@kapan.am

3301 г.Капан, Чаренца 1
тел. /+37460/720072
e-mail: kapanmayor@gmail.com, info@kapan.am

11 հուլիսի 2024թ. N **Ե-13/3355**
Ձեր _____ **N** _____

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ա Գ Ի Ր

(ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ /փողոցներ, բակեր, մայթեր/ գնման N «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-23/06/02» պայմանագիրը միակողմանի լուծելու մասին)

«Կապանի համայնքապետարան», ի դեմս համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանի (այսուհետ՝ Պատվիրատու) և <<Կաոլին>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մանաս Կարապետյանի (այսուհետ՝ Կապալառու) միջև 18.04.2023 թվականին կնքվել է ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ /փողոցներ, բակեր, մայթեր/ գնման N «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-23/06/02» պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ *Կապալառուն պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել նույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Կապան քաղաքի Փողոցների, բակերի և մայթերի հիմնանորոգման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:*

Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն պատվիրատուն իրավունք ունի՝ *միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.*

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհապույց վերացման ողջամիտ ժամկետները.

Պայմանագրի 6.3 կետի համաձայն ՝ Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ

որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը նույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

Պայմանագրի 6.4 կետի համաձայն՝ Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

Հաշվի առնելով «Կաոլին» ՍՊ ընկերության 20.12.2023 թվականի թիվ 08 դիմումը (պայմանագրից հրաժարվելու մասին),Կապանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բանժնի պետ Կ.Գրիգորյանի 09.07.2024թ. զեկուցագիրը և այն, որ Կապալառուն խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունները, մասնավորապես՝ աշխատանքներ չի կատարում կամ կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար, հետևաբար Պատվիրատուն օգտվելով Պայմանագրով նախատեսված իր իրավունքներից ***որոշեց***.

«Կապանի համայնքապետարան», ի դեմս համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանի և <<Կաոլին>> ՍՊԸ, ի դեմս տնօրեն Մանաս Կարապետյանի միջև 18.04.2023 թվականին կնքված ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ /փողոցներ, բակեր, մայթեր/ գնման N «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-23/06/02» պայմանագիրը 11.07.2024 թվականից միակողմանի լուծել և Կապալառուի նկատմամբ կիրառել Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ**

Կատ. Աշխատակազմի գլխավոր մասնագետ-իրավաբանի պաշտոնակատար՝ Նարե Բարսեղյան